

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Թիվ 4(161)
Ապրիլ,
2013թ.

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛՏԱՐԱՆ»

ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ Է ԲԱՅՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՋ

Ապրիլի 18-20-ը Մոսկվայում Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանում կայացավ «Բարչրազույն դպրոց փորձ, հեռանկարային խնդիրներ» բեմայով 6-րդ միջազգային գիտագործնական կոնֆերանսը, որին հրավիրվել է մասնակցել են Արցախի պետական համալսարանի ռեկտոր Սյրեվան Դադայանը և ԱրՊՀ դասախոս, նախկին ռեկտոր Համլեթ Գրիգորյանը: Կոնֆերանսի կազմակերպիչներն էին ՌԴ կրթության և գիտության նախարարությունը, Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանը, Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը, Բարչրազույն դպրոցի գիտության միջազգային սկալդեմիան և Մանկավարժական կրթության և գիտության միջազգային սկալդեմիան:

Գիտական հասարակության կայացմանը,- հավելել է Ստեփան Դադայանը: Պլենար նիստից հետո կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց առանձին բաժանմունքներում, որոնցից մեկում՝ ռուսական բանասիրության ֆակուլտետում գեկուցումով հանդես եկավ ռեկտոր Ստեփան Դադայանը: Նա խոսեց ոչ միայն Արցախի պետական համալսարանի ու նրա զարգացման խնդիրների մասին, այլև հանգանակից ներկայացրեց Ղարաբաղյան շարժման նախապատմությունը, նրա շարժառիթները: Ս. Դադայանը գոհունակությամբ նշեց, որ լսարանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել մեր երկրամասի հանդեպ: Ներկայների մեծ մասը՝ հատկապես պրոֆեսորադասախոսական կազմը, ինչպես ասաց ԱրՊՀ ղեկավարը, քաջատեղյակ էր Ղարաբաղի ու նրա հայրրդների կատարած սխրագործությունների մասին: Նրանցից մի քանիսն իրենց ելույթներում նշել են, որ Ղարաբաղը քաջերի, մեծ գիտնականների և գորավարների երկրամաս է: Որպես հավելում ասվածի՝ ԱրՊՀ ռեկտորը լսարանին բաժանել է Արցախի մասին պատմող գունավոր բուկլետները:

Այդը, սակայն, միայն կոնֆերանսին մասնակցությունը չի ավարտվել: Արցախի մայր բուհի պատվիրակությունը եղել է նաև ՌԴ Սարատով քաղաքի պետական համալսարանում (ի դեպ, այս բուհն է ավարտել ռեկտոր Ստեփան Դադայանը): Գիտահետազոտական և ուսումնառաստիարակական և հասարակական-մշակութային գործունեության մեջ երկկողմանի համագործակցության զարգացման նպատակով երկու համալսարանների միջև ստորագրվել է համաձայնագիր, ինչը ենթադրում է մասնավորապես գիտական հետազոտությունների և մշակումների արդյունքների, հրատարակումների, ուսումնական նյութերի փոխանակում, առաջնային տեխնոլոգիաների և ուսուցման մեթոդների ներդրման փորձի փոխանակում, գիտական կադրերի պատրաստման մեջ փոխադարձ օգնության ցուցաբերում, ուսանողների և դասախոսների փոխանակում և այլն: Արդեն իսկ ձեռք բերված պայմանագրով ծառայության համաձայն՝ մոտ ասպպայում մասնակցության գործընթացում, որն ունի գիտական աստիճան, ԱրՊՀ դասախոսներ են: Համալսարանի գիտնականներն աշխատում են պետության կողմից ֆինանսավորվող նպատակային գիտական թեմաների վրա: Մտացված գիտական արդյունքները գույքահեռաբար ներդրվում են ուսումնական գործընթացում, ինչը ուսանողների գիտության և ստեղծագործական մտքի հետ շփվելու ձևերից մեկն է հանդիսանում: Արցախի մայր բուհի ղեկավարը կոնֆերանսի մասնակցներին իրազեկել է, որ ԱրՊՀ-ում իրականացվում է երկրի համար գիտական ու կադրային ներուժի ինտեգրման և լիարժեք օգտագործման գիտակցված ծրագիր:

«Այսօր ԱրՊՀ-ում կենտրոնացված է հանրապետության հիմնական ինտելեկտուալ ներուժը՝ ընդունակ լուծելու ինչպես կրթության, գիտության և մշակութային հիմնախնդիրները, այնպես էլ ակտիվորեն մասնակցելու երկրի քաղաքական կյանքին՝ ժողովրդավարական և քաղաքա-

ցիական հասարակության կայացմանը», - հավելել է Ստեփան Դադայանը: Պլենար նիստից հետո կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց առանձին բաժանմունքներում, որոնցից մեկում՝ ռուսական բանասիրության ֆակուլտետում գեկուցումով հանդես եկավ ռեկտոր Ստեփան Դադայանը: Նա խոսեց ոչ միայն Արցախի պետական համալսարանի ու նրա զարգացման խնդիրների մասին, այլև հանգանակից ներկայացրեց Ղարաբաղյան շարժման նախապատմությունը, նրա շարժառիթները: Ս. Դադայանը գոհունակությամբ նշեց, որ լսարանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել մեր երկրամասի հանդեպ: Ներկայների մեծ մասը՝ հատկապես պրոֆեսորադասախոսական կազմը, ինչպես ասաց ԱրՊՀ ղեկավարը, քաջատեղյակ էր Ղարաբաղի ու նրա հայրրդների կատարած սխրագործությունների մասին: Նրանցից մի քանիսն իրենց ելույթներում նշել են, որ Ղարաբաղը քաջերի, մեծ գիտնականների և գորավարների երկրամաս է: Որպես հավելում ասվածի՝ ԱրՊՀ ռեկտորը լսարանին բաժանել է Արցախի մասին պատմող գունավոր բուկլետները:

ԾԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՅՑՈՎ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Սեկորյա ճանաչողական այցով Արցախում էին գտնվում Եվրոպական խորհրդարանի Եվրամիություն-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի և Ֆրանսիա-Արցախ բարեկամության շրջանի պատգամավորներ՝ Եվրախորհրդարանի պատգամավոր էլենի Թեոխարուսի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Եվրախորհրդարանի պատգամավորներ Էդվարդ Շտադլերը, Կիրիակոս Տրիանտաֆիլիդեսը, Ֆրանսիայի Աժ պատգամավորներ Վալերի Բուայեն, Գի Տեսսիեն և հայտնի հայագետ Բերնար Կուլին:

Եվրամիություն-Հայաստան բարեկամության խմբի անդամներն ու Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավորները ապրիլի 26-ին հյուրընկալվեցին Արցախի մայր բուհում: Համալսարանի գիտական նիստերի դահլիճում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ կայացած հանդիպման ժամանակ հյուրերին ողջունեց Արցախի պետական համալսարանի ռեկտոր Ստեփան Դադայանը:



Հյուրերից ոմանք առաջին անգամ էին Արցախում, ուստի իրենց խոսքում նրանք առաջին հերթին ընդգծեցին զարգացման դիմանկան ինչպես Արցախի մայր բուհում, այնպես էլ համալսարանում ընդհանրապես: Եվրախորհրդարանի պատգամավոր էլենի Թեոխարուսը տարիներ առաջ Արցախում էր որպես բժշկուհի: Այն ժամանակ պետական համալսարանն նա չէր այցելել. եկել էր վիրահատությունների կատարելու համար: Գլխավորությամբ Վալերի Բուայեն, ով երեք ուսանողի մայր է, լավ է գիտակցում կրթության դերը ժամանակակից աշխարհում ու կարևորում է Արցախում կրթության մակարդակի դերի բարձրացումը: Իսկ ինչ վերաբերում է Ֆրանսիայի խորհրդարանում իր ծավալած գործունեությանը՝ նա նշեց. «Մեզ՝ պատգամավորներին և սենատորներին համար կարևոր է Արցախի անցյալը ու պատմությունը իմանալը, մենք պարտավոր ենք ճանաչել արդարությունը»:

Հայտնի հայագետ Բերնար Կուլին իր աշակցությունը խոստացավ Արցախի երիտասարդ կորստահանին. ինքն աշխատում է յոթ հարյուրամյակի պատմություն ունեցող հաստատությունում և պատրաստակամ է իր փորձը փոխանցել արցախցի գործընկերներին:

Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Վալերի Բուայեն, ով երեք ուսանողի մայր է, լավ է գիտակցում կրթության դերը ժամանակակից աշխարհում ու կարևորում է Արցախում կրթության մակարդակի դերի բարձրացումը: Իսկ ինչ վերաբերում է Ֆրանսիայի խորհրդարանում իր ծավալած գործունեությանը՝ նա նշեց. «Մեզ՝ պատգամավորներին և սենատորներին համար կարևոր է Արցախի անցյալը ու պատմությունը իմանալը, մենք պարտավոր ենք ճանաչել արդարությունը»:

Արցախի պետական համալսարանը գիտակցում է այն պարտավորությունը, որ կրում է, ասաց ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը: «Մեր երկիրը միջազգայնորեն ճանաչված չլինելու հանդերձ՝ առաջնորդվում է միջազգային կանոններով, նաև այս ճանապարհով ճանաչում ակնկալելով», - հավելեց Ստեփան Դադայանը:

«ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ՝ ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂՈՒԹՅԱՆԸ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

«Հայ համայնքը՝ հայ ուսանողությունը» հիմնադրամը հիմնադրվել է որպես հասարակական կազմակերպություն և բարեգործական ծրագրեր է իրականացնում կրթության, գիտության, մշակութային և այլ բնագավառներում: Հիմնադրամի առաջնությունն է ծրագրի անվանական կրթաթոշակների հատկացումն է Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին: Հիմնադրամի հովանավորներ են հանդիսանում իրենց գիտական և մասնագիտական գործունեությունում բացառիկ հաջողությունների հասած մեր հայրենակիցները և ընտրած բիզնեսում առաջատար հանդիսացող իրավաբանական անձինք: Անվանական թոշակների տրամադրման հետ մեկտեղ՝ հիմնադրամի հովանավորներն ակտիվ մասնակցություն են բերում ապագա մասնագետների կայացմանը և նրանց մասնագիտական աճին աջակցելով նրանց մասնակցությանը համաժողովներին, մրցույթներին, վերապատրաստմանը և պրակտիկային: Հիմնադրամի կողմից իրականացվող բարեգործական ծրագրի հերթական հասցեն Արցախի մայր բուհն էր: Ապրիլի 29-ին հյուրընկալվելով ԱրՊՀ-ում, հովանավորները՝ հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՌԴ գիտության վաստակավոր գործիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Ենգիբարյանի գլխավորությամբ, գիտական նիստերի դահլիճում հանդիպում ունեցան պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողական ակտիվի հետ: Ողջունելով հյուրերին՝ ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը շնորհակա-

լություն հայտնեց բարերարների՝ Արցախի կրթական հաստատության հանդեպ ցուցաբերած ուշադրության համար: «Արցախցին լավ գիտի ուսման հարգը: Հայրենիքի համար վտանգի պահին մայր բուհի հարյուրավոր ուսանողներ գրիչը փոխարինեցին զենքով, իսկ նրանցից 72-ը նա-



հատակվեցին համուն ազատ ու անկախ Հայրենիքի», - ասաց Ստեփան Դադայանը: Ռոբերտ Ենգիբարյանը, չթաքցնելով հիացմունքը, իր խոսքում գոհունակություն հայտնեց Արցախում գտնվելու համար: Խոսելով անվանական կրթաթոշակների տրամադրման կարգի մասին, նա նշեց, որ դրանք տրամադրվում են 3-րդ և բարձր կուրսերի ուսանողներին, ովքեր ակնառու ընդունակություններ են ցուցաբերել ուսումնական և գիտական գործունեության մեջ ինչպես ընդհանուր ուսումնառության ընթացքում, այնպես էլ առանձին առարկաների գծով: Անվանական թոշակառուների թեկնածուները համաձայն հոգաբարձուների կողմից հաստատված հատուկ անվանական կրթաթոշակների մասին դրույթների,

առաջադրվում են ֆակուլտետների ղեկավարների և ուսանողական խորհուրդների կողմից: Անվանական կրթաթոշակներ տրամադրվում մասի որոշումը, համաձայն բուհում ընդունված կարգի, ընդունում է ռեկտորատը կամ գիտական խորհուրդը:

Համաձայն գործող կարգի՝ ԱրՊՀ ֆիզիկամաթեմատիկական և տնտեսաիրավաբանական ֆակուլտետների յոթ ուսանողների Անուշ Դուլուկանյանին, Սերիմե Յարա-միշյանին, Դիանա Ջաբարյանին, Հարություն Սահակյանին, Եվգենյա Հակոբյանին, Անուշ Դանիելյանին և Էլզա Դալայանին անվանական կրթաթոշակների տրամադրման սերտիֆիկատներ հանձնվեցին: Այսուհետ ամեն ամիս նրանցից յուրաքանչյուրի հաշվեհամարին կփոխանցվի 20-հազարական դրամ: Ինչպես հավաստիացրին հովանավորները, դա շարունակական բնույթ կունենա՝ մինչև նրանց բուհական և հետբուհական կրթությունն ավարտելը: Այդ ուսանողները պարտավոր են շարունակել լավ սովորել, հակառակ դեպքում կզրկվեն տրամադրվող գումարից:

Բարերարներ Արտավազ Յախշի-բեկյանը, Մնացական Գասպարյանն ու Գագիկ Սարգսյանը իրենց ելույթներում խրատի կարգով, ուսանողներին հորդորեցին գիտության բարձունքների մղված ճանապարհին երբեք չբավարարվել ձեռք բերածով, մշտապես ձգտել հասնել առավելագույնին, քանզի դա են պահանջում ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումները՝ լինել պահանջված և մրցունակ:

Լամար ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՍՏՐՈՎՍԿԻՆ ՄԻԱՅՆ ՌՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻՆԸ ՉԷ...

Ռուս մեծ գրող, դրամատուրգ Ալեքսանդր Օստրովսկու ծննդյան 190-ամյակին նվիրված՝ «Ա. Ն. Օստրովսկի. ռուսական և ազգային գրականություններ» քննարկով միջազգային գիտագործնական կոնֆերանսը, որ մեկնարկել էր Երևանում, ապրիլի 13-ին իր շարունակությունն ու ավարտը գտավ Ստեփանակերտում՝ Արցախի պետական համալսարանում: Կոնֆերանսի կազմակերպիչներն էին՝ արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական հասարակական կազմակերպությունը, Երևանի Բյուրոսովի անվան լեզուների պետական համալսարանը, Հայաստանում ռուսահամագործակցության ներկայացուցչությունը, Արցախի պետական համալսարանը և «Հայաստան-Ռուսաստան» բարեփոխության կազմակերպությունը: Ամենախաղաղ միջոցառմանը մասնակցելու նպատակով արտերկրից ժամանած պատվիրակության կազմում էին Տոնսկի, Աստրախանի, Ստավրոպոլի պետական համալսարանների պրոֆեսորներ, ներկայացուցիչներ Լ. Ն. Տոլստոյի ծննդավայրից՝ Յասնայա Պոլյանայից և Նյու Յորքի համալսարանից:

Ողջույնի իր խոսքում ԱրՊՀ ռեկտոր Ստեփան Դադայանը նշեց, որ Ա. Օստրովսկու նվիրված միջոցառումը Հայաստանում և Արցախում անցկացնելը մեկ անգամ ևս փաստում է հայ և ռուս ժողովուրդների հոգևոր կապի մասին: «Մեծ է Օստրովսկու դերը ռուսական դրամատուրգիայի, ռուսական և համաշխարհային մշակույթի զարգացման գործում», ասաց Ա. Դադայանը: Հռչակավոր դերասանուհի, Փոքր թատրոնում Օստրովսկու ստեղծարարների ներկայիս ամրապնդվող կապերին ծանոթացնելը, ասաց Ա. Դադայանը: Նա իր երախտագիտությունը հայտնեց կոնֆերանսի կազմակերպիչներին հատկապես Մ. Ամիրխանյանին, մարդ, ով իր ամբողջ կյանքը նվիրել է Հայաստանում ռուսական մշակույթի ավանդույթների պահպանմանը:



Ավանդույթի համաձայն՝ հյուրերը հարգանքի տուրք մատուցեցին Արցախյան պատերազմում զոհված ուսանողների հիշատակին ծաղիկներ դնելով նրանց հուշակոթողին: Մայր բուհի նիստերի մեծ դասի ժամանակ ռուսացած գիտաժողովին բացման խոսք ասաց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սիբայել Ամիրխանյանը, ով հանդիսանում է միջոցառման հիմնական նախաձեռնողը: Նրա հավաստմամբ՝ այս ձևաչափով սա յոթերորդ գիտագործնական կոնֆերանսն է մինչ այդ՝ նման գիտաժողովներ են անցկացվել՝ նվիրված Գոգոլին, Չեխովին, Լերմոնտովին, Տոլստոյին, Նեկրասովին, Պուշկինին:

Վերջինից և ոչ ինչ ժամանակագրորեն ընդհանրացնելով Օստրովսկու հերոսների քուրայով անցած տարբեր սերունդներին սկսած 1898թ. Շուշիի համաճարակից բառարկման միջոցով: «Ավածից հետևում է, որ Օստրովսկին միայն ռուս ժողովրդին չէ. նա աշխարհին է ու նաև արցախցիներին: Դասականները հայրենիք չունեն, նրանց ստեղծագործությունները պետական սահմաններ չեն ճանաչում, նրանք արդիական են բոլոր ժամանակների համար», ասաց Կ. Ավազյանը: «Ա. Ն. Օստրովսկին արցախյան բեմում» հանգամանակից գեղեցկամբ հանդես եկավ ԱրՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի ղեկավար Իննա Արամյանը: 1935թ. տակավին երիտասարդ Ստեփանակերտի թատրոնը բեմադրեց Օստրովսկու «Ամեն մեղավորները», ինչը մեծ քաջություն էր սովյալ ժամանակաշրջանի համար: Բանաստիպ ներկայացմամբ՝ Ստեփանակերտը փոքր գյուղաքաղաք էր, և բոլորը ճանաչում էին իրար: Հեռավոր այդ տարիներին այստեղ հյուրախաղերի էր եկել հայկական թատերաբեմերի երախտավորներից մեկը՝ Իսահակ Ալիխանյանը: Նա չորս ներկայացում է բեմադրել Ստեփանակերտում,

Ստեղծագործությունների կերպարները մարմնավորող Մարիա Երմոլովան ասել է. «Օստրովսկու հետ մեկտեղ բեմում երևան է եկել ինքը՝ արդարությունը կամ ինքը՝ կյանքը»: Իսկ նրա ժամանակակից, գրող Ի. Գոնչարովը նկատել է. «Այժմ մենք՝ ռուսներս, հպարտությամբ կարող ենք ասել՝ մենք ունենք մեր ազգային թատրոնը»: Արցախի մայր բուհի ղեկավարը հավաստիացրեց, որ համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի գործունեությունն ուղղված է Արցախում ռուսաց լեզվի իմացության ավանդույթների պահպանմանը և համակրթական դպրոցների համար ռուսաց լեզվի դասնակցների պատրաստմանը: Ամբիոնը գիտահետազոտական մեծ աշխատանքներ է տանում, ԱրՊՀ ռուսական մշակույթի բարեկամների կենտրոնը ստեղծագործական հրապարակ է հանդիսանում, որը պայմաններ է ստեղծում գեղարվեստական ակցիաների կազմակերպման և գիտական քննարկումների համար: Դա մի յուրօրինակ ակումբ է, որի նպատակը ռուսական մշակույթի ժառանգության պահպանումն է, ռուս-հայկական հարաբերությունների պատմությանը ու երկու ժողո-

«ՈՒՐԱՆ ԵՆՔ, ՈՐ ՀԶՈՐ ՌՈՒՄԱՅ ԼԵԶՈՒՆ ՊԱՀԱՆՉՎԱԾ Է ՈՒ ՍԻՐԵԼԻ ԱՐՑԱԽՈՒՄ»

Ինչպես արդեն նշվեց, Արցախի պետական համալսարանում կայացած՝ ռուս մեծ գրող, դրամատուրգ Ալեքսանդր Օստրովսկու ծննդյան 190-ամյակին նվիրված գիտագործնական կոնֆերանսին մասնակցել են հյուրեր Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության և Նյու Յորքի բարձրագույն ուսումնական հասարակություններից: Կոնֆերանսի ավարտին նրանցից ոմանք իրենց տպավորություններն են կիսել մասնակիցների հետ, որպես խոսել են ոչ միայն գիտաժողովի ու նրա նշանակության, այլև Արցախի ու նրա հերոսական ժողովրդի մասին:



Իրինա ՎՅՉԻՆՆԱՅԱ, Տոնսկի պետական համալսարանի ընդհանուր գրականագիտության ամբիոնի վարիչ:

Փոխանցել Դարաբաղի ժողովրդին: Ամբողջ գիտագործնական կոնֆերանսի ընթացքում հնչած ելույթներում խոսվեց Օստրովսկու՝ ռուսական և համաշխարհային մշակույթի զարգացման մեջ ունեցած ներդրման մասին: Իսկ ես ուզում եմ ուրիշ բան ասել. այն, թե ինչ դեր ունեցավ այսօրվա միջոցառումը, այսօրվա հանդիպումը մեր հետագա հարաբերություն-

ների համար: Բոլոր դեպքերում՝ ես ձեզ խոստանում եմ, որ Տոնսկի համալսարանում կիսմանս դարաբաղցիներին, Արցախի պետական համալսարանի կոնկրետի մասին, այն մասին, թե ինչպես են նրանք սիրում ռուս գրականությունը, ռուսաց լեզուն: Ես հիացած եմ ձեզմով... Այնքան կցանկանալի ինքս էլ ողջունել ձեզ հայերենով, տիրապետել հայոց լեզվին, բայց ցավոք, ի ամոթ ինձ, ես չեմ տիրապետում ձեր չքնաղ լեզվին: Իսկ դուք պահպանեք ձեր լեզուն, պահպանեք ձեր սերը ռուսական մշակույթի, ռուս գրականության հանդեպ: Տոնսկի իմ գործընկերների ամուսնից երախտագիտություն եմ հայտնում ԱրՊՀ ռեկտորատին՝ Ստեփան Դադայանի գլխավորությամբ, Սիբայել Ամիրխանյանին՝ մյուս գեղեցիկ նախաձեռնության համար, ինչի շնորհիվ հասկացանք, որ չնայած հազարավոր կիտմետրեր են մեզ բաժանում, բայց մենք հոգեպես մոտ ենք իրար: Այսօր ես հասկացա, որ մենք արյունակիցներ ենք, մենք բոլոր ու եղբայրներ ենք:



Ի Ր Ի Ն Ա ՊՐԻՈՐՈՎԱ, բանասիրական գիտությունների դոկտոր, Աստրախանի պետական համալսարանի ընդհանուր լեզվագիտության ամբիոնի պրոֆեսոր:

- Ես ցնցված եմ... Ներ-

կա գտնվել այսպիսի հեղինակավոր հավաքի՝ այսպիսի նշանավոր իրադարձության առիթով և ստանալ այսպիսի հուզական խթան՝ դա բաներով նկարագրել հնարավոր չէ: Փոխադարձ հոգևոր հարստացման, փոխըմբռնման և բարեկամության շրջանակներում տեղի ունեցած այս հոյակապ միջոցառման համար առաջին հերթին պետք է երախտագիտություն հայտնել կազմակերպիչներին: Կարծում եմ, մասնակիցներս դեռ երկա՞ր, շա՞տ երկար կիչները այս օրը: Մեզ համար զարմանալի ու միաժամանակ ուրախացնող է, որ Արցախի բեմադրված իր բեղմնավոր ուղին անցել է Ա. Օստրովսկու ստեղծագործությունների ուղեկցությամբ: Սա նշանակում է, որ հայ-ռուս բարեկամության արմատները շատ խորն են: Ուրախ ենք այն ավանդի համար, որ ներդրվում է Արցախի մայր բուհում՝ ռուսաց լեզվի և ռուսական մշակույթի զարգացման համար: Ես Աստրախանում իմ գործընկերներին, ուսանողներին, մագիստրանտներին, բոլորի՛ն կպատմեմ, թե որքան սիրելի է ու պահանջված մեծ, հզոր ռուսաց լեզուն այս փոքրիկ հողակտորում ապրող ժողովրդի համար:

Ելեմ ԲԵՆՈՒՍՈՎԱ, Լ. Ն. Տոլստոյի «Յ ա ս ն ա յ ա Պ ո յ ա ն ա » բ ա ն գ ա ր ա ն կ ա լ ա մ ժ ք ի ավագ գիտաշխատող:
- Ոտք դնելով հերոսա-

որոնց գլխավոր դերերը կատարել է ինքը, այդ թվում՝ Նեգմանովի դերը՝ «Ամեն մեղավորներ» պիեսում: Այդ մասին Ալիխանյանը ժամանակին գրել է. «Իմ Նեգմանովը երբեք չի եղել այդքան հուզաշատ: Էլ ավելի հուզախառն էր դահլիճը... Դա անկրկնելի Նեգմանով էր»: Նշվեց, որ Կրուչինյանի դերում եղել է Արուս Դազուբյանը, իսկ Շմազաչի՝ Կարո Ավարյանը: Դա Օստրովսկու ստեղծագործության և «Ամեն մեղավորներ» պիեսի առաջին բեմադրությունն էր արցախյան բեմում: Դրանից հետո պիեսը բեմադրվել է վեց անգամ՝ տարբեր թատերաշրջաններում ու տարբեր տարիներին: Թատերաբեմերի նկատմամբ ոչ անտարբեր հայ հասարակությունը չի կարող մոռանալ «Արդյունավետ պաշտոն», «Ամպրոպ», «Գայլեր և ոչխարներ», «Գեղեցիկ տղամարդը», «Վերջին գոհը» և այլ ստեղծագործություններ, որոնք արտացոլում են 19-րդ դարի ռուս հասարակության ճակատագիրը և որոնց դրվագներն արդիական են առ այսօր:

Կոնֆերանսի շրջանակներում ասելիք ունենեմ նաև ուսանողները: ԱրՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Լուսին Առաքելյանի ջանքերով կազմակերպված Օստրովսկու մոտիվներով փոքրիկ ներկայացումը մեծ բավականություն պատճառեց կոնֆերանսի մասնակիցներին: Այն մեկ անգամ ևս փաստեց, որ մայր բուհում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը գտնվում է բարձր մակարդակի վրա:

Ուսանողների ցուցադրած խաղի և կոնֆերանսի մասին ընդհանրապես իրենց տեսակետն արտահայտեցին Տոնսկի պետական համալսարանի ընդհանուր գրականագիտության ամբիոնի վարիչ Իրինա Այիկովան, Աստրախանի պետական համալսարանի ընդհանուր լեզվագիտության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Իրինա Պրիորովան, Լ. Ն. Տոլստոյի «Յասնայա Պոլյանա» թանգարան-կալվածքի ավագ գիտաշխատող Ելենա Բելոուսովան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը, Մեարայ Մաշտոց համալսարանի ռեկտոր Դոմոնա Գաբրիելյանը:

Նույն օրը գիտագործնական կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց մասնաբաժիններում: Հերթական գիտագործնական կոնֆերանսը, որի թեման կլինի Տուրգենևը, տեղի կունենա ընթացիկ տարվա հոկտեմբերին: Ռեկտոր Ստեփան Դադայանը հավաստիացրեց, որ ԱրՊՀ-ն նույնպես ակտիվ մասնակցություն կցուցաբերի այդ կոնֆերանսին:

ՀՈՔԵԼՅԱՆ

ԿՈՉՄԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՍ



Լրացավ Իրինա Յոփիկի Իշխանյանի ծննդյան 60-ամյակը: 1970թ. ավարտելով Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքի Կենտրոնական սպառնիության կոոպերացիայի ինստիտուտի ակադեմիայի բաղադրության ֆակուլտետը՝ «Ապրանքագետ և առևտրի կազմակերպիչ» մասնագիտությամբ: 1974թ.

ավարտելով ընդունվել է Մոսկվայի Կենտրոնական սպառնիության կոոպերացիայի ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետը և ավարտելով ձեռք բերել «Առևտրային գործընթացի տեխնոլոգիայի» գծով մանկավարժի որակավորում: 1975-ից առ այսօր աշխատել է տարբեր տեղերում՝ ձեռք բերելով աշխատանքային հարուստ փորձ: Կենսագրության երկու տասնյակից ավելի տարիները նա նվիրել է բուհական գործունեությանը: 1990 թվականից աշխատում է Արցախի պետական համալսարանում և նշված ժամանակամիջոցում զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ ֆակուլտետի ղեկավար, ղեկավարի տեղակալ, ամբիոնի վարիչ: 2005թ. պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Մարքեթինգի գործունեության կազմակերպումը և կառավարումը ԼՂՀ կազմակերպություններում» թեմայով: 2001թ. ԱրՊՀ տնտեսագիտության ամբիոնի վարիչ է, 2006թ. փետրվարից՝ ԱրՊՀ տնտեսագիտության ամբիոնի ղոցեմտ: Ունի 19 գիտական հոդվածներ՝ տպագրված ՀՀ և ԼՂՀ առաջատար գիտական հրատարակություններում:

Սեփական հեղինակության հարգն իմացող դասախոսն առաջնորդվում է մեկ սկզբունքով. «Գիտության և կրթության բնագավառում աշխատող պետք է լինի իր գործին նվիրյալ»: Նրա կյանքի խաչներուկներում, բուհական լսարաններում հանդիպած-ճանաչած-ունկնդրած բոլոր մարդիկ կարող են վկայել, թե ինչպիսին է Իրինա Իշխանյանը առօրյա փոփոխաբերություններում. խաղաղ ու հանդարտ խոսք, պարզ ու հասարակ կեցվածք, բարեկիրք վարվեցողություն... Մարդ, ում հետ շփվելիս անբացատրելի-հաճելի զգացումներ են պարունակում թեզ՝ նրա հետ կրկին հանդիպելու ցանկությամբ:

Իր կոչմանը վայել արժանապատվությամբ, իր գործով ապրող անհատ է Ի. Իշխանյանը, արարման բերկրանքը վայելող անձնավորություն: Հագարավոր ուսանողներ են լսել նրա խոսքը, նրա օգնությանը ծանաչել սեփական գոյի իմաստը և ոգեղեն ուժ ու կրթով ստացել: «Այն, ինչ ուզում ես, որ քեզ անեն մարդիկ, նույնն էլ դու արա նրանց համար».: այս նշանաբանով է կյանքի իր ճանապարհն անշեղորեն անցնում տիկին Իշխանյանը՝ վաստակելով գործընկերների և ուսանողների սերն ու հարգանքը:

Շնորհավորենք նրան հորեկյանի առիթով՝ մաղթելով արևաշատություն, երկար տարիների անսպառ աշխատանք:

«ԵՐԻՏԻՈՐՐՈՂԱՐԱՆԻՑ ՏԵՍԱՆԵԼԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՄ...»

Հարցազրույց ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս, ՀՀ երիտասարդական խորհրդարանի պատգամավոր Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հետ

- Ինչպես հայտնի է, մարտի 22-ին կայացած՝ ՀՀ ԱԺ կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին կից երիտասարդական խորհրդարանի հերթական լիազուսմար միստին մասնակցել էք նաև Դուք՝ որպես ԼՂՀ ներկայացուցիչ: Սա նշանակում է, որ Դուք երիտասարդական անդամ եք և այստեղ մասնակցելու՞ն էք բոլոր միստերին: Փոքր-ինչ մանրամասնե՞ք...

- Նախ ասեմ, որ ՀՀ երիտասարդական խորհրդարանում Արցախի ներկայացուցիչ ունենալու գաղափարը շրջանառության մեջ էր, սակայն կյանքի կոչվեց 2013թ. հունվարի 25-ին կայացած միստում, որի ժամանակ լրացում կատարվեց երիտասարդական կազմավորման և գործունեության կարգում, ու մեկ տեղ հատկացվեց ԼՂՀ-ին: Այս հանգամանքը միանգամայն տրամաբանական է և հարիր երկու հայկական պետությունների վարած քաղաքականությանը, որն արտահայտվում է տարբեր ոլորտներում: Ի դեպ, ՀՀ Ազգային ժողովում ևս Արցախն ունի ներկայացուցիչ, սակայն երիտասարդական ներկայացուցչի տարբերություն այն է, որ նա 131 պատգամավորներից մեկն է՝ օժտված լիարժեք ծայրի իրավունքով: Ինչ վերաբերում է միստերին մասնակցելուն, ապա պետք է արվի հնարավորը՝ անխտիր բոլոր միստերին ներկա գտնվելու և ամբողջ գործընթացներին ներգրավված լինելու համար՝ անկախ տարածության և ժամանակի հանգամանքներից:

- Ի՞նչ է իրենից ներկայացնում երիտասարդական խորհրդարանը, որն է նրա նպատակը, և այնտեղ ընթացված օրենսդրական փոփոխություններն ու առաջարկությունները որքանով են ընդունվում ՀՀ ԱԺ-ում:

- Ինչպես նշվեց, ՀՀ երիտասարդական խորհրդարանը գործում է ՀՀ ԱԺ կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին կից: Որպես նոր իրողություն՝ այն հիմնվել է 2011թ. մարտի 28-ին: Սույն՝ երկրորդ գումարման ԵԽ-ն գործում է 2012թ. թվականի նոյեմբերի 6-ից, իսկ իմ մասնակցությամբ միստը 4-րդն է: Ընդհանրապես, երիտասարդական խորհրդարանը, համաձայն գործող Կարգի, խորհրդակցական մարմին է: Այն իր առջև դրել է մի շարք նպատակներ, որոնցից կառանձնացնելի օրենսդրական գործունեություն ծավալելու մշակույթն ամրապնդելը, ինչը պատեհ հնարավորություն է երիտասարդներին վաղ տարիքից ավելի առարկայորեն ծանոթանալու օրենսդիր մարմնի գործունեությանը: Որպես կանոն՝ երիտասարդական խորհրդարանի կողմից ընդունված օրինագծերն ուղարկվում են ՀՀ ԱԺ համապատասխան ոլորտային հանձնաժողովներ: Սակայն ՀՀ ԱԺ-ում նման նախադեպ դեռևս չի եղել, որ ԵԽ-ի ընդունած օրինագիծը մտնի ՀՀ ԱԺ օրակարգ, բայց, կարծում եմ դա դեռ սկիզբն է:

- Փաստորեն Դուք Արցախի երիտասարդության ներկայացուցիչն եք ՀՀ երիտասարդական և կարող եք հանդես գալ նրանց շահերից... Չե՞ր կարծիքով՝ մեզ գործընթացների մասնակցությունը որքանով կլինի օգտակար մեր երիտասարդության և ընդհանրապես, ԼՂՀ-ի համար:

- Նախ պետք է նշել, որ համաձայն ՀՀ ԵԽ գործունեության կարգի 14-րդ կետի 4-րդ ենթակետի՝ ԼՂՀ ներկայացուցչի թեկնածությունն առաջադրվում է ԼՂՀ Ազգային ժողովի կողմից: Ինչ վերաբերում է ՀՀ ԵԽ-ում Արցախի երիտասարդության ներկայացուցչին լինելու հանգամանքին, ապա ներկայումս փորձում ենք հստակեցնել Արցախի ներկայացուցչի գործունեության ձևաչափը: Այստեղ կարևոր է համագործակցությունը, իսկ որպես դրա արգասիք կարող են նշել այն, որ լիազուսմար միստին մի շարք երիտասարդ խորհրդարանական



ներ պատրաստակամ ու թյուն են հայտնել իր ենցն փորձով ու գիտելիքներով ամեն կերպ աջակցել ԼՂՀ-ում երիտասարդական խորհրդարանի ձևավորելու գործին: Ասեմ ավելին. ՀՀ ԱԺ ղեկավարության, մասնավորապես կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանի կողմից վարվող քաղաքականությունը նպատակ ունի ԵԽ-ի շրջանակներում Արցախը ներգրավել հնարավորինս շատ գործընթացների, ինչի խոսում վկայություններին է, օրինակ, իմ մասնակցությունը Սանկտ Պետերբուրգում կայացած ԱՊՀ անդամ-պետությունների երիտասարդական միջխորհրդարանական միջխորհրդարանական վեժաժողովի առաջին միստին:

Հարկ է նկատել, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում երիտասարդության շրջանում կան և ժամանակի ընթացքում ի հայտ են գալիս լուծում պահանջող նոր խնդիրներ: Կենսագործունեության բոլոր ոլորտներում լինելով նույն դաշտում կամ հարթության վրա՝ երիտասարդությանը հուզող հարցերը հաճախ անմանկված կամ նույնանուն են, և այս իմաստով հայաստանյան փորձը ուսանելի կլինի արցախյան երիտասարդության համար: ՀՀ երիտասարդական խորհրդարանի միստերին Արցախի ներկայացուցչի մասնակցությունը անփոխարինելի կարևորություն է մեծ փորձ կունենան նաև Արցախում երիտասարդական խորհրդարանի հիմնելու գործում, որի անհրաժեշտությունը վաղուց արդեն զգացվում է: Հուսով ենք՝ մոտ ապագայում դա իրականություն կդառնա:

Չափումիք չէ նաև, որ այսօր ԼՂՀ-ի համար թիվ 1 խնդիրը երկրի միջազգային ճանաչումն է, իսկ այդ գործընթացը, որքան էլ առաջին հայացքից հեշտ ու պարզ թվա, իրականում շատ ավելի բարդ է ու աշխատատար: Այդ ամբողջ գործընթացի կարևորագույն օղակներից մեկը աշխարհի տարբեր ծագերում դառաբաղյան հիմնախնդիր, երկրում տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացների և քաղաքացիական հասարակության կառուցման ուղղությամբ ձեռնարկվող քայլերն օբյեկտիվ և համակողմանի ներկայացնելն է: Այս համատեքստում առանձնապես կարևորվում է ինչպես երիտասարդության, այնպես էլ երիտասարդական խորհրդարանի դերը:

Իմ խորին համոզմամբ՝ երիտասարդների մոտ ակտիվ կեցվածք պետք է սերմանել դեռևս դպրոցական տարիներից, այնուհետև ամրապնդել համալսարանական կրթության տարիներին, որից հետո նոր՝ ավելի գործնական երանգ հաղորդել երիտասարդական քաղաքականությանն ու երիտասարդական խորհրդարանի գործունեության միջոցով պաշտպանելու արմատավորմանն ու ամրապնդմանը: Արցախում երիտասարդական ունենալու նպատակներից մեկը պետք է հանդիսանա երկրում երիտասարդական պաշտպանության գործունեությանն ու գաղափարային արմատավորմանն ու գաղափարային կարգազրույցի արմատավորմանը: Այստեղ հստակ է արտահայտվում, որ արդարևո՞ր է սպարոն հատկապես եվրոպական երկրներում:

- Երիտասարդական լիազուսմար միստից մի քանի օր անց՝ մարտի 29-ին, Սանկտ-Պետերբուրգում տեղի է ունեցել ԱՊՀ երկրների երիտասարդական միջխորհրդարանական վեժաժողովի անդ-

րանիկ միստը, որին նույնպես մասնակցել եք՝ որպես երիտասարդական անդամ: Ի՞նչ հարցեր են ընթացվել վեժաժողովում:

- Ո՞ր Սանկտ Պետերբուրգ քաղաքի Տավրիկյան պալատում կայացած ԱՊՀ անդամ-պետությունների երիտասարդական միջխորհրդարանական վեժաժողովի անդամները միստին ՀՀ պատվիրակությունը մասնակցել է երկու հոգանոց կազմով՝ Կառլեն Խաչատրյանը, ով ՀՀ երիտասարդական նախագահն է և ես: Նիստի ընթացքում ընթացվել են առավելապես կազմակերպչական բնույթի հարցեր, հստակեցվել առաջիկա անելիքները: Մասնավորապես, ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնք պետք է մշակեն ԱՊՀ երկրների երիտասարդական միջխորհրդարանական վեժաժողովի կանոնակարգի փոփոխությունների փաթեթը, երիտասարդական միջխորհրդարանական ֆորումի անցկացման և կառուցի տարբերաձևի մրցույթի կանոնակարգը: Ի թիվս այլ հարցերի և ղեկավարվելով վեժաժողովի կանոնակարգի 16-րդ կետով՝ առաջին միստում ընտրվել է ԱՊՀ ԵՄԽ-ի կողմից ստորագրող: Որպես այդպիսին ներկայացվել է Արքեպիսկոպոս-վիսկոպոս կառուցողականության խմբակ: Այս կառուցողականության խմբակի ղեկավարը Գրիգոր Թեմաշյանն է: Այստեղ ևս ընտրվել է մեկ տարի ժամկետով: Քանի որ կողմից ստորագրվել է Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավարը:

Նշեմ, որ Հայաստանի պատվիրակությունից ես ընդգրկվել եմ այն աշխատանքային խմբում, որը զբաղվելու է երիտասարդական միջազգային ֆորումի հարցերով, որից մեծ ակնկալիքներ ունենք: Նիստում հաստատվել է նաև 2013թ. աշխատանքային պլանը, համաձայն որի՝ վեժաժողովի հաջորդ միստը նախատեսվում է անցկացնել տույն թվականի նոյեմբեր ամսին:

- Այնպես կայանալիք երիտասարդական համաժողովին ի՞նչ ծրագրով եք հանդես գալու:

- Ես ամենուրեք ունեմ իմ սկզբունքները և առաջնորդվելով դրանցից մեկով, այն է՝ ամեն ինչից օգտակար մի բան քաղել արցախցիների համար, այս կառուցից ևս որոշակի և արդեն տեսանելի ակնկալիքներ ունեմ: Նիստի ընթացքում առաջարկ է եղել առանձնահատուկ ուշադրություն դարձնել կրթական և մշակութային ծրագրերի իրականացմանը: Եվ ժամանակից մի փոքր առաջ անցնելով ասեմ, որ ինչ էլ նաև այսպիսի մի առաջարկ. կազմակերպել վերատեսչի բնույթի երգի մրցույթ՝ անդամ-պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այս և նմանատիպ միջոցառումներին, համոզված եմ, հնարավորություն կունենան մասնակցել նաև արցախյան երիտասարդները:

Ներկայումս աշխատում եմ և փորձում եմ հստակեցնել այն ծրագրի շրջանակները, որով պետք է հանդես գան հաջորդ միստին: Դա իմնականում առնչվում է վեժաժողովի կանոնակարգում որոշակի փոփոխություններ կատարելուն, իմա՝ վեժաժողովի միստերին դիտորդ-պետության ներկա գտնվելու հարցի համակողմանի կարգավորմանը՝ հեռանկարում տեսնելով Արցախի ԵԽ-ի մասնակցությունը: Մյուս առաջարկ կապված է խաղաղապահ գործունեության մասշտաբների ընդլայնման հետ: Հավանաբար, շատերն են հիշում, որ ԱՊՀ ՄԽԿ-ն նպաստել է ԼՂՀ-ում իրադարձարի ռեժիմի հաստատմանը, ավելի կոնկրետ՝ Քիչքեյան արմատագրության ստորագրմանը: Իսկ իմ առաջարկը լիովին տեղավորվում է հռչակված գաղափարի տիրույթում: Այս և այլ գաղափարներ դեռևս խմորման փուլում են:

Լատուրա ՂՐԻՂՐՈՒՆ

ПОЗДРАВЛЯЕМ



Не так давно свое 60-летие отметила преподаватель кафедры русского языка и литературы АрГУ, доцент Бегларян Лилия Робертовна.

Родилась в 1953г., в г. Степанакерте. В 1969г. окончила среднюю школу № 3, а в 1971г. поступила на

филологический факультет ЕрГУ по специальности «русский язык и литература».

В 1976г. поступила на работу в качестве преподавателя в АрГУ, на кафедре русского языка и литературы.

В 1980-87гг. работала также корректором в редакции газеты «Советский Карабах».

Бегларян Лилия Робертовна является автором десятка научно-методических статей, пособий.

Коллеги сердечно поздравляют Лилию Робертовну, желают ей здоровья и дальнейших успехов.

Ժ Պ Ի Տ Ն Ե Ր

- Ջուլիետ, այս ի՞նչ ես նկարել:
 - Մեր ընտանիքը:
 - Բա հայրիկի ձեռքն ինչո՞ւ ես բարձրացրած նկարել:
 - Որովհետև փող ստացած է:

- Բայիկ, մագերդ լավ չես սանրել, հետևից գեղեցիկ չէ:
 - Տատի, իմ աչքերը առջևից են, ես էլ առջևից եմ մագերս լավ սանրել, աչքերս հետևից հո չե՞մ տեսնում:

- Տատի, գիտե՞ս, որ մարդ մեռնում է, քաղում են և վրան հող լցնում:
 - Ջուլիետ, դա քեզ չի վերաբերում, մնան բաներ մի՛ խոսիր:
 - Ինչո՞ւ չի վերաբերում, չէ՞ որ ես էլ մարդ եմ:

- Տատի, փողոցում շատ մեքենաներ են հավաքվել:
 - Մարդ է մահացել... պատուհանից մի՛ մայիթ, այստեղ արի:
 - Որ ժամը 12-ը դառնա, թույլ կտա՞ս մայիթ:

- Խանութ գնալիս, փոքրիկս, որանը բռանդ մեջ պի՞նդ կպահես, թե չէ ձեռքիցդ կառնեն:
 - Ոչ թե կառնեն, տատի, այլ կվերցնեն, առնելը փողով է լինում:

- Գարաբաղ, իմ Գարաբաղ...
 - Ջուլիետ, գիտե՞ս, որ Գարաբաղին Արցախ էլ են ասում:
 - Հա՛, գիտե՞ս, պապիկ,- Արցախբանկ:

- Որ սառը հյուսիս չես տալիս, գնալու եմ մեր տուն, մենակ ես քնելու, տատի՛...
 - Ինչ կա որ, վախենալու՞ եմ:
 - Չես վախենալու, է՛, մեր բոլորիս մասին մտածելու ես, ճնշումդ բարձրանալու է:

Ջուլիետին կատվի արձանիկով դրամատուփ են նվիրում:
 Նայում է, նայում և ասում արձանիկին.
 - Ի՞նչ ես աչքերդ չռել, փող չկա՛ լցնեմ փողոց, կշտամաս:

Լեւոն ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՉԵՏԱՔՐՔԻՐ ԾՐԱԳՐՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

«Վալերա» խմբի ընկերությունների նախաձեռնությամբ և ԱրՊԴ ռեկտորատի աջակցությամբ Արցախի պետական համալսարանի մի խումբ ուսանողներ ապրիլի 13-ին մեկնեցին Երևան:

Օրագիրը բավականին հետաքրքիր էր. Երևանում գտնվելու հենց առաջին օրից Արցախի մայր բուհի ուսանողներիս համար կազմակերպվել են տարբեր հանդիպումներ և այցելություններ: Նախ եղանք Երևանի Ջերարդ Լ. Գաֆեսյան արվեստի կենտրոնում, ծանոթացանք կենտրոնի յոթ սրահներում առկա գործերին, որոնց մեջ գերակշռում են ապակյա իրերից քանդակները: Հաջորդ օրը՝ ապրիլի 14-ին, եռաբլուրում «Վալերա»-ի նախաձեռնությամբ և Երևանի ու Ալավերդու քաղաքապետարանների, ինչպես նաև Լոռու մարզպետարանի աջակցությամբ կազմակերպվեց ծառատունկ: Ակցիային մասնակցում էին խմբի ընկերությունների ներկայացուցիչներ, բարձր դասարանների աշակերտներ, ուսանողներ՝ Հայաստանի տարբեր շրջաններից:

Հարկ է նշել, որ սա եռաբլուրի տարածքում կազմակերպված երկրորդ ծառատունկն է «Վալերա»-ի կողմից: Նախորդ ծառատունկի արդյունքներից ընդհանուր առմամբ գոհ էին նախաձեռնողները. նշվեց, որ տնկած ծառերի 70%-ը աճել է: «Թեղուտ» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ Արթուր Բոչյանն իր հերթին նշեց, որ սկիզբը խոստումնալից է, իսկ նպատակը՝ նահատակների հիշատակը հարգելը: Այս անգամ Ա. Բոչյանը ծառատունկի համար Թեղուտից բերել էր տույայի 200 տնկեցի: Նախքան աշխատանքներն սկսելը, գյուղատնտեսն իր մասնագիտական խորհուրդները տվեց ներկաներին՝ գործընթացը ճիշտ կազմակերպելու համար: Ծառատունկի մասնակիցներն անտարբեր չեղան նախորդ ակցիա-

յի ընթացքում տնկած ծառերի նկատմամբ՝ դրանց ցուցաբերելով համապատասխան խնամք:

Աշխատանքներն ավարտելուց մասնակիցներս եղանք եռաբլուր սրբավայրում, որտեղ մեզ ընդունեց պանթեոնի հրամանատարության ներկայացուցիչ, կապիտան Ալբերտ Առաքելյանը: Ներկաներին ուղղված իր խոսքում նա մասնավորապես ասաց. «Ով սիրում է իր հայրենիքը, նա լինում է եռաբլուրում: Իսկ նմանատիպ գործեր կատարելով՝ ապացուցում ենք, որ նահատակների հիշատակը թանկ է մեզ համար»: Հերոսների հիշատակը հարգելու նպատակով խմբի հետ էր նաև զոհված ազատամարտիկ Վահագն Վարդանյանի հայրը, ում մասին խոսելով՝ կապիտան Առաքելյանն ասաց. «Հերոսից քաջ է ծնվում, վախկոտից՝ դավաճան: Նրա որդին քաջ էր...»:

Ընդմիջումից հետո օրը շարունակվեց հագեցած ծրագրով: Եղանք Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող Հուշահամալիրում, որտեղ շրջելով Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանում, մեկ անգամ ևս համոզվեցինք, որ 20-րդ դարասկզբին կատարված ոճրագործությունը վաղեմություն չունի...

Իսկ երեկոյան մեզ հետաքրքիր ժամանց էր սպասվում. «Մուկվա» կինոթատրոնում կազմակերպվեց ֆիլմի դիտում՝ 3d ֆորմատով: Հաջորդ օրը վառ տպավորություններով վերադարձանք Արցախ: Միջոցառման մասնակից ուսանողների անունից խորին շնորհակալություն են հայտնում ԱրՊԴ ղեկավարությանը՝ մեզ նման հնարավորություն ընձեռելու համար:

Սիրանուշ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Լրագր., 4-րդ կուրս

ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ...

Հայ ժողովուրդը հերոսական, ազատագրական պայքարի ու մաքառումների անմար հիշատակներով ու նաև արհավիրքներով լեցուն հարուստ պատմություն ունի: Հազարամյակների պատմություն, որի բառապաշարում ճակատագրի փորձություն էր նախապես իսկ հայերի համար. փորձվեց հայի արիությունը, կամքը, մինչև իսկ ծով համբերությունը: Մեր ժողովուրդը րեալ պայքարում ու գաղթ, բայան ու կոտորած: Մեկը մյուսին հաջորդող սրբազանություններից ու ջարդերից չընկնեց հայի արարող ոգին. թեև մի բուռ դարձավ, սակայն մայր հողին կառչելով արարեց ու շենացրեց իր ուսմանը:

Հայ ժողովրդի պատմության ամենամոռայի ու անասարսուռ էջը գրվեց 1915 թվականին:

Հայ ազգի արմատական բնաջնջումը կանխամտածված՝ հայաստյաց ծրագրի արդյունք էր, որն իրականացվեց մարդկությանը հայտնի ու անհայտ բոլոր մահերով: Հարյուր հազարավոր հայեր ցրվեցին աշխարհով մեկ՝ ծնունդ տալով հայկական Միդիային: Թշնամին գիտակցեց, որ հային հաղթել չի լինի և իրեն հատուկ թուլամորթությամբ նենգաբար հարվածեց հենց քիկունքից: Նրա թիրախը դարձան անպաշտպան, անզեն մարդիկ, մայրեր ու բույրեր, ծերեր ու մանուկներ:

Թուրքին չհաջողվեց թրջացնել ու ստրկացնել հային: Երիտթուրքերը պատրաստ էին եղբայրանալ հայերի հետ միայն մի չնչին պայմանով՝ եթե վերջիններս համաձայնվեին ուրանալ իրենց արմատն ու լեզուն, կրոնն ու ազգությունը, հպարտությունն ու ինքնությունը, դարավոր ու փառավոր անցյալն ու պատմությունը: Այստեղ հարկ է մեջբերել Գևորգ Էմինի խոսքերը. «Բայց հնարավոր էր, արդյոք, ստրկացնել Մասունցի Գավիթ ստեղծած ժողովրդին, իսկ Ավարայրում կռված ժողովրդի հավատն ու լեզուն, հնազանդ պահել Նարեկացու հույզերի հրաբխային պոռթկումը ճաշակած մարդուն, նոր աստված ու մարգարե պարտադրել Սմբատ Ջարեհավանցու բռնանը և կորել այն լեզուն, որով քնարել են Գողթան երգիչներն ու Օնորիակին, Ֆրիկն ու Քուչակը...»

1915թ. ապրիլի 15-ին արևմտահայության ոչնչացման մասին որոշում կայացվեց և որպես հրաման՝ Թալեաթի, Էմվերի և Նազրմի ստորագրությամբ ուղարկվեց տեղական իշխանություններին: Համաձայն այդ գաղտնի հրամանի՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության կոմիտեն, կանխելու համար որևէ մի տեղ և որևէ մի ձևով Հայկական հար-

ցի բարձրացումը, որոշել էր վերջնականապես վերջ դնել այդ հարցին՝ բնաջնջելով այդ խորթ տարրը, այսինքն՝ հայերին՝ քշելով նրանց Արաբիայի անապատները: Ավելին, ովքեր կփորձեին պաշտպանել կամ թաքցնել հայերին, ճանաչվում էին հայրենիքի ու կրոնի թշնամի և ենթակա էին խիստ պատիժների:

Արմախում թուրքը, օգտվելով համաշխարհային պատերազմի ընձեռած պատեհությունից, հայերին բնաջնջելու համար գործի դրեց իր հանցավոր ծրագիրը: Գևորգ Էմինի վկայությամբ, «Երիտասարդ թուրքեր»-ի կուսակցության 3 գործադիր կոմիտեի առաջին նիստում, գեկուցելով իր դահճակիցներին ծրագրվող ջարդի մանրամասնությունները, Բեհեդդին Շաքիրը ասում էր. «Պատերազմի մեջ ենք. Եվրոպայի ու մեծ պետությունների միջամտության վախ չկա: Նույնիսկ աշխարհի մամուլը չի կարող բողոք բարձրացնել, իսկ եթե բարձրացնի էլ, արդյունք չի ունենա, որովհետև արդեն կանգնած կլինի կատարված փաստի առաջ... Եթե մենք այս պարտականությունը պետք եղածի պես չվերջացնենք և նախորդների նման կիսատ թողնենք, ապա հազիվ թե կարողանանք փրկվել հայերի վրիժառությունից»: Շաքիրին մի շատ կարևոր հարց էր մտահոգում՝ ո՞վ պիտի ջարդի հայերին: Այդ կարևոր գործը գործին վստահել չէր կարելի՝ զինվոր է, մեկ էլ տեսար իրաժարվեց երեսային քարերին խփելով ջախջախել, կամ պառավ մամիկի վրա նավթ լցնել և կենդանի-կենդանի այրել: Ժողովրդին նույնպես դժվար էր վստահել. հանկարծ եթե հայերին ջարդելու համար բանակված զենքը օտարգործեր իրենց՝ «Երիտասարդ-թուրքերի» դեմ... Վեճվեց ծրագրի իրականացման համար հազարավոր գողերի, ավազակների ու մարդասպանների ազատ արձակել բանտից, որոնց համար դժվարություն չէր ներկայացնի թալանել, բռնաբարել, սպանել ու սրախողխող անել անպաշտպան հայերին:

Այստեղ տեղին է հիշատակել երիտթուրքերի արյունաբերու կոմիտեի անդամ, ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի ցինիկ հեռագիրը. «Մեղմ ժամկետում ինձ գեկուցեք, որ մենք ունենք Հայաստան՝ առանց հայերի»:

Ըստ նախօրոք կազմված ծրագրի՝ հայերին պետք է տեղահանեին իրենց գյուղերից ու քաղաքներից, խումբ-խումբ քաղաքներ և պայմանավորված վայրերում ենթարկեին վերոնշյալ ավազակախմբերի հարձակմանը: Գահճի խայծը նախ և առաջ մտավորականությանն էր ուղղված, որը մի նպատակ էր հետապնդում՝ արևմտահայությանը գրկել կազմակերպա-

կան ու դիմադրողական ուժերից: Ենիշերական գազանությունը այնքան ասինդիկացուցիչ էր, որ Կոմիտասի նման հանճարին հասցրեց խելագարության:

Չիրագործվեց Էմվեր, Ջենալ, Թալեաթ փաշաների երազանքը, ովքեր ատելության մուլոցքով բռնկված՝ ցանկացան միայն մեկ հայ թողնել, և այն էլ՝ թանգարանում: Մոտ մեկուկես միլիոն անմեղ զոհեր մահվան սարսափելի պատժին արժանացան իրենց հայ լիներու պատճառով: Այդ մասին է վկայում անգամ հայադավ անգլիացի հետախույզ Թոմաս Լոուրենսը. «Հայերը ամենախելացի, ամենապատկառելի, ընտրասերված, ամենաբարձր զարգացած ցեղն են աշխարհում՝ քաղաքակառուցության տեսակետից: Բայց, այնուամենայնիվ, նրանք պետք է ոչնչացնել մինչև վերջին մարդը, երևի հենց նման արժանիքների համար»:

Ահա Յեղասպանության ժամանակակիցներից մեկի վկայությունը. «Թուրք եղեռնը նյութին մեջ հաջողված էր, իսկ էության մեջ՝ ձախողված», իսկ ֆրանսիացի գիտնական Շառլ դե Մորգանը գրել է. «Արևմտահայերի տեղահանությունները ոչ այլ ինչ են, քան ազգի քողարկված ոչնչացում: Չկա մի որևէ հարուստ լեզու, որ նկարագրի այդ սարսափները»:

Լոնդոնյան «Գեյլի Թեյեզարաֆ» թերթի թղթակից Էմիլ Դիլոն, պատմելով կոտորածների ականատեսների հետ ունեցած իր գրույցի մասին, նշում է. նրանք զգացական ոգևորությամբ պատմում էին, թե հայերին որտեղ, ինչքան և ինչպես են կոտորել ամենամեծ: Լրագրողի հավաստմամբ, օսմանյան կայսրության երկուրդ թաղված էր Հայաստանում բարենորոգումներ կատարելու սեփական խոստումի խորքերում: Եվ այդ երկուրդից ազատվելու համար, որոշեց մեկընդմիջտ ազատվել ատելի ազգից, կործանել նրան, ջնջել նրա անունը՝ խմելով նրա արյան վերջին կաթիլը...

1915 թվականին ոչնչացվեցին հազարավոր պատմական հուշարձաններ, խլվեց 1.5 մլն մարդկային կյանք: Փրկվածները մազապուրծ ու հարկադրաբար վտարվեցին իրենց հայրենի բնօրրանից՝ ապաստանելով աշխարհի տարբեր ծագերում...

2015 թվականին կրրանա Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը: Երկու տասնյակից ավելի պետություններ են ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանության հարցը: Նշենք, որ առաջին պետությունը, ով պաշտոնապես ճանաչեց հայերի նկատմամբ իրագործված սպանող, Ուրուգվայն էր՝

1965 թվականին: Այսօր էլ շարունակվում է այդ գործընթացը, որին զուգընթաց Թուրքիայի պետությունը շարունակում է իր ժխտողական քաղաքականությունը: Սակայն Թուրքիան անգոր է պատմության կայացրած դատավճիռը չեղյալ հայտարարել. մի՞թե հնարավոր է հայ և օտարազգի ականատեսների հիշողություններից ջնջել սակնդկեցուցիչ դրվագները, հազարավոր փաստաթղթերն ու վավերագրերը: Իհարկե՞ ոչ: Քանի դեռ գերտերությունների կողմից չի ճանաչվել Հայոց ցեղասպանությունը, թուրք մարդասպանն իր ճանապարհից կհեռացնի Հրամոս Գիլգեյի նման մեծ մտածողների, քնած վիճակում կկացնահարի Գուրգեն Մարգարյանների, իսկ Օրհան Փամուկի ու Աբրահամ Ալիյի նման մտավորականներին, ովքեր 100-ամյա մեղքի կապանքներից ազատվելու համար դատապարտելով նախնիների կողմից իրականացված ոճրագործությունը, սպիտակ թղթին են հանձնում իրենց հոգին կեղեքող վկայությունները, ենթարկվելու են բազում կտտանքների ու հալածանքների:

Պետք է պայքարենք հանուն արդարության, հանուն մարդկային արդարության, քանզի քաղաքակիրթ աշխարհը դատապարտելով 20-րդ դարասկզբի մեծ ոճրագործությունը, թույլ չի տա, որ այլևս պատմության մեջ նման մութ էջեր գրվեն:

Հուսանք՝ սարերի հետևում չէ հայերի Նյուրնբերգը...

Արիկ ԲԱՐՍԵՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ՝
 ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մեր հասցեն՝ Մ.Գռչի 5
 հեռ. 94-04-91

Տպագրվում է
 «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ-ում
 Տպագրված նյութերում տեղ գտած
 փաստերի համար
 պատասխանատու են հեղինակները

Խմբագիր՝
 ԼԱՌԻՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ